Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 20

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության լիցենզավորման հանձնաժողովի նիստի

<<22>> դեկտեմբերի 2023թ. ք. Երևան

2023 թվականի դեկտեմբերի 22-ին տեղի ունեցավ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության լիցենզավորման հանձնաժողովի նիստը:

Հանձնաժողովի 6 անդամներից նիստին մասնակցում էին՝

Ա. Խաչատրյան — Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության իրավաբանական վարչության պետ, հանձնաժողովի նախագահի տեղակալ

Ա. Ստեփանյան — Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության լիցենզավորման և թույլտվությունների բաժնի պետ, հանձնաժողովի անդամ

Խ. Սողոմոնյան — Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության պետ, հանձնաժողովի անդամ

Տ. Գասպարյան — Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության երկաթուղային և ջրային տրանսպորտի քաղաքականության վարչության պետի տեղակալ, հանձնաժողովի անդամ

Ռ. Այվազյան — Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության բաժնի պետ, հանձնաժողովի անդամ:

Նիստը նախագահում էր հանձնաժողովի նախագահի տեղակալ Ա. Խաչատրյանը: Նիստից բացակայում էր հանձնաժողովի նախագահ Ա. Սիմոնյանը:
Նիստն արձանագրում էր Ա. Ստեփանյանը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ո Ւ Մ

1. Հայաստանի Հանրապետությունում սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և լիցենզիայի ներդիր տրամադրելու ներկայացված 1 հայտի քննարկում:

2.Տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և ներդիր տրամադրելու համար ներկայացված 1 հայտի քննարկում:

3.Անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման լիցենզիան և լիցենզիայի ներդիրներն ուժը կորցրած ճանաչելու համար ներկայացված 1 հայտի քննարկում:

4.Տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության N ՏՄՏԶ 00052 լիցենզիայի գործունեության վայրի փոփոխության համար ներկայացված 1 հայտի քննարկում:

1. Հայաստանի Հանրապետությունում սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և ներդիր տրամադրելու համար ներկայացված հայտերի քննարկում

Քննարկվեց՝ <<ՄՈԲԻԼ ԳԱԶ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության /այսուհետ՝ Կազմակերպություն/ 2023 թվականի դեկտեմբերի 4-ի հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը և նոյեմբերի 20-ին ի լրումն ներկայացված նյութերը՝ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և գազաբալոնների պարբերական վկայագրման ներդիր տրամադրելու մասին:

Ա. Ստեփանյանը ներկայացրեց, որ Կազմակերպությունը 2023 թվականի դեկտեմբերի 4-ին լիազոր մարմին է ներկայացրել սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և գազաբալոնների պարբերական վկայագրման ներդիրներ տրամադրելու հայտ՝ ՀՀ, Արմավիրի մարզ, համայնք Փարաքար, գ. Մերձավան, Երևանյան խճուղի 1/2 գործունեության վայրում:

Կազմակերպության գործունեության վայրում ուսումնասիրությունն իրականացվել է Լիցենզավորման հանձնաժողովի անդամներ Ա. Ստեփանյանի և Ռ. Այվազյանի կողմից:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց հանձնաժողովի քարտուղար Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

<<ՄՈԲԻԼ ԳԱԶ>> ՍՊԸ	5 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝

Ներկայացված հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 9-ի N 1998-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի պահանջներին՝ ենթակա է բավարարման:

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

2. Տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության իրականացման լիցենզիա և ներդիր տրամադրելու համար ներկայացված հայտի քննարկում

Քննարկվեց՝ անհատ ձեռնարկատեր ԱՂԱՍԻ ԿԱՌԼԵՆԻ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԻ /այսուհետ՝ Կազմակերպություն/ 2023 թվականի դեկտեմբերի 13-ի հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և թեթև տրանսպորտային միջոցների հոսքագծի ներդիր տրամադրելու մասին:

Ա. Ստեփանյանը ներկայացրեց, որ Կազմակերպությունը 2023 թվականի դեկտեմբերի 13-ին ներկայացրել է հայտ և հայտին կից փաստաթղթեր՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և թեթև տրանսպորտային միջոցների հոսքագծի ներդիր տրամադրելու մասին՝ ՀՀ, Արմավիրի մարզ, համայնք Փարաքար, գ. Փարաքար, Մ. Նալբանդյան փողոց 7 գործունեության վայրում:

Կազմակերպության գործունեության վայրում ուսումնասիրությունն իրականացվել է Լիցենզավորման հանձնաժողովի անդամներ Ա. Ստեփանյանի և Ռ. Այվազյանի կողմից:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց հանձնաժողովի քարտուղար Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

ԱՁ ԱՂԱՍԻ ԿԱՌԼԵՆԻ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ	5 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝

Ներկայացված հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են ՀՀ կառավարության 2021 թվականի սեպտեմբերի 24-ի N 1565-Ն և 2007 թվականի փետրվարի 15-ի N 690-Ն որոշումներով հաստատված կարգերի պահանջներին՝ ենթակա է բավարարման:

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

3. «ՀԱՅՐ ԵՎ ՈՐԴԻ ՄԽԻԹԱՐՅԱՆՆԵՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման ՏԾ N05286 լիցենզիան և լիցենզիայի ներդիրներն ուժը կորցրած ճանաչելու համար ներկայացված դիմումի քննարկում:

Քննարկվեց՝

«ՀԱՅՐ ԵՎ ՈՐԴԻ ՄԽԻԹԱՐՅԱՆՆԵՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2023 թվականի դեկտեմբերի 15-ի դիմումը՝ անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման ՏԾ N 05286 լիցենզիան և լիցենզիայի N 00001-ից N 00014 ներդիրներն ուժը կորցրած ճանաչելու մասին:

Ա. Ստեփանյանը՝

Ներկայացրեց «ՀԱՅՐ ԵՎ ՈՐԴԻ ՄԽԻԹԱՐՅԱՆՆԵՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը 2023 թվականի դեկտեմբերի 15-ի դիմումը՝ անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման ՏԾ N 05286 լիցենզիան և լիցենզիայի N 00001-ից N 00014 ներդիրներն ուժը կորցրած ճանաչելու մասին:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամներն ուսումնասիրեցին դիմումը և դիմումին կից ներկայացված փաստաթղթերը՝ լիցենզիայի և ներդիրների բնօրինակները:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները, տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը

Հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

«ՀԱՅՐ ԵՎ ՈՐԴԻ ՄԽԻԹԱՐՅԱՆՆԵՐ» ՍՊԸ	5 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝ ըստ «Լիցենզավորման մասին» օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

4. «ԷՄ ԷՆԴ ՋԻ ՄՈԹՈՐՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության N ՏՄՏՋ 00052 լիցենզիայի գործունեության վայրի փոփոխության և վերաձևակերպման մասին

Քննարկվեց՝ «ԷՄ ԷՆԴ ՋԻ ՄՈԹՈՐՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության N ՏՄՏՋ 00052 լիցենզիայի գործունեության վայրի փոփոխության և վերաձևակերպման մասին:

Ա. Ստեփանյանը ներկայացրեց «ԷՄ ԷՆԴ ՋԻ ՄՈԹՈՐՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության N ՏՄՏՋ 00052 լիցենզիայի գործունեության վայրի փոփոխության մասին դիմումը և պարզաբանեց, որ կազմակերպությանը 2021 թվականի հոկտեմբերի 21-ին տրամադրվել է Տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության ՏՄՏՋ N 00052 լիցենզիան և թեթև տրանսպորտային միջոցների N 0001 ներդիրը՝ Կոտայքի մարզ, Չարենցավան, Ալափարս, Չարենցավանի խճուղի 10 հասցեում: 2023 թվականի դեկտեմբերի 16-ին կազմակերպությունը դիմել է ՏՄՏՋ N 00052 լիցենզիայի գործունեության վայրը ՀՀ, Արմավիրի մարզ, համայնք Բաղրամյան, գյուղ Դալարիկ Երևանյան փողոց թիվ 28 հասցե տեղափոխելու համար: Գործունեության ՀՀ, Արմավիրի մարզ, համայնք Բաղրամյան, գյուղ Դալարիկ Երևանյան փողոց թիվ 28 հասցեում գտնվող վայրի ուսումնասիրությունն իրականացվել է լիցենզավորման հանձնաժողովի անդամներ Խ. Սողոմոնյանի և Ա. Ստեփանյանի կողմից:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը, մասնավորապես՝ նոր գործունեության վայրի հատակագիծը և արատորոշման միջոցների ստուգաչափման վկայականները:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի քարտուղար Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

«ԷՄ ԷՆԴ ՋԻ ՄՈԹՈՐՍ» ՍՊԸ	5 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝

Ներկայացված դիմումը և դիմումին կից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են «Լիցենզավորման մասին» օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի և 33-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի և ՀՀ կառավարության 2021 թվականի սեպտեմբերի 24-ի N 1565-Ն և 2007 թվականի փետրվարի 15-ի N 690-Ն որոշումներով հաստատված կարգերի պահանջներին՝ ենթակա է բավարարման:

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարության
լիցենզավորման հանձնաժողովի
նախագահի տեղակալ Ա. Խաչատրյան

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարության
լիցենզավորման հանձնաժողովի քարտուղար Ա. Ստեփանյան